

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԳԵՄՔԻ (ՈՒ ԹՎԻ)
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ա. Ա. ԱՐԲԱՆՈՎՅԱՆ

Բայական դեմքը բնորոշվում է գործողության, եղելության կամ դրության և նրա ենթակայի՝ խոսողի նկատմամբ մասնավորվող հարաբերությամբ: Չեզոքումն ստանալով ստորոգյալի կամ նրա մի մասի մեջ՝ բայական դեմքն իր թվով հանդերձ իմաստային տեսակետից հանդես է բերում մի կողմից ստորոգյալի ու նրա ենթակայի սերտ կապը և մյուս կողմից այդ կապի մասնավորումը խոսողի նկատմամբ: Չէ՞ որ բոլոր դեպքերում ենթական խոսողը չի լինում. խոսողից բացի, նախադասության ստորոգյալի համար ենթակա կարող են լինել նաև խոսակիցը և խոսողությանը շմանակցող ու իրրև մի երրորդ կողմ հանդես եկող առարկա (կամ առարկաներ): Այս պայմաններում էլ բայի երեք դեմքերի իմաստների քերականական հիմնավորումն են ստանում և ըստ համապատասխան մտքի արտահայտման պահանջի ստորոգյալի մեջ երևան են բերում իրենց իմաստներն ու կիրառությունները:

Ընդհանրապես բայական դեմքի իմաստային զանազան դրսևորումներն ըստ կիրառությունների թե՛ տեսական և թե՛ գործնական առումով շատ հետաքրքրական ու կարևոր են: Հարցի ուսումնասիրության կարևորությունն ընդգծելու համար շատ լավ օրինակ կարող է ծառայել ժամանակակից ռուսերենի քերականագիտության չափազանց հարուստ պատմությունը: Ռուս նշանավոր լեզվաբաններից շատերը մեծ կարևորություն են տվել բայական դեմքի իմաստային ու կիրառական իրողությունների հետազոտմանը: Մեր խնդիրը չէ ներկայացնել հարցի պատմությունը, միայն նշել, որ այդ ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքները տեսականորեն ընդհանրացված և սեփական արժեքավոր հետազոտություններից բխած եզրակացությունների հետ ներկայացված են ակադ. Վ. Վ. Վինոգրադովի կողմից՝ «Русский язык» հայտնի աշխատության մեջ¹: Ժամանակակից ռուսերենի բայի դիմային իմաստները ըստ կիրառությունների նորմավորված նկարագրություն են գտել ակադեմիական քերականության մեջ²:

Դասագրքային բնութագրումներից դատ ժամանակակից գրական հայերենի բայի դեմքի և թվի իմաստային առանձնահատկությունների նկարագրման հաջող փորձ է արել Շ. Բարսեղյանը³:

Օգտագործելով մի կողմից ռուսերենի ուսումնասիրությամբ հանդես բերված եզրակացությունները տեսական առումով, իսկ մյուս կողմից՝ հայերենի փաստերով մինչ այժմ մատնացույց արված իրողությունների նկարագիրը և միաժամանակ քննելով առաջադիր հարցերին վերաբերող նյութը որոշ իրողությունների վերհանումով՝ տեսնում ենք, որ ժամանակակից գրական հայերենի բայական դեմքի (ու թվի) իմաստային և կիրառական առանձնահատկությունների զգալի բազմազանություն ունի: Դրա քիչ թե շատ ամբողջական բնութագիրը խիստ անհրաժեշտ է համապատասխան իրողությունների քերականական նորմավորման, խոսքի կառուցման համար նրանց պատշաճ օգտագործման, ինչպես և տեսական ընդհանրացումների տեսակետից:

¹ В. В. Виноградов, Русский язык. Грамматическое учение о слове, М.—Л., 1947, էջ 458—465:

² Грамматика русского языка, т. I. Фонетика и морфология, 1952, М., էջ 469—473:

³ Շ. Բ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 270—275: Դերանունների քերականական հատկանիշների կապակցությամբ դեմքի ու թվի իմաստային ու կիրառական առանձնահատկությունների վերաբերյալ ուղղորդյալ արժանի դիտողություններ է արել Ս. Գ. Աբրահամյանն իր «Արդի հայերենի դերանունները» աշխատության մեջ (Երևան, 1956):

նկատվում կամ հոգնակի թվում յուրաքանչյուր դեմքի իմաստային-կիրառական առանձնահատկությունները քննելիս զրանց բնութագրման համար անհրաժեշտ է իրեն կողմնորոշիչ դժերեկատի ունենալ երկու տիպի՝ ա) հիմնական, բ) երկրորդական նշանակությունները:

Հիմնական նշանակության տակ պետք է հասկանալ դիմա-թվային տվյալ ձևի որոշակի-դիմաթվին իմաստային կիրառությունը, այսինքն նրա բուն նշանակությունը:

Երկրորդական նշանակությունների մեջ էլ պետք է տարբերել իմաստային-կիրառական երեք կարգի երանդներ՝ ա) անորոշ-դիմաթվին, բ) ընդհանուր-դիմաթվին, գ) փոխարինական:

Բայի դիմափոք ձևը անորոշ-դիմաթվին նշանակություն ու կիրառություն է ստանում այն դեպքում, երբ ոչ միայն տվյալ նախադասության, այլև արտահայտվող ընդհանուր խոսքի մեջ գործողությունը, եղելությունը կամ գրությունը չի վերադրվում լիովին հայտնի, որոշակի ենթակայի, երբ ենթական դիմաթվին տեսակետից անորոշ է և նախադասության մեջ էլ չի արտահայտվում հենց այդ պատճառով: Հնարավորության դեպքում նա կարող էր հանդես գալ միայն դիմաթվին մի կողմում, սակայն մնում է անորոշ:

Դիմաթվին այսպիսի նշանակությունից, անշուշտ, տարբերվում է ընդհանուր-դիմաթվին նշանակությունը: Բայի դիմափոք ձևը ընդհանուր-դիմաթվին նշանակություն և կիրառություն է ստանում այն դեպքում, երբ հանդես է գալիս երեք դեմքերի դիմաթվին հարաբերությունների հանդեպ ունեցած հավասար նշանակությամբ, դիմաթվին հավասար դիրքով, հետևաբար դիմաթվին տվյալ ձևով արտահայտվող գործողությունը, եղելությունը կամ գրությունը հավասարապես կարելի է վերադրել թե՛ առաջին, թե՛ երկրորդ, թե՛ երրորդ դեմքի ենթակայի և ոչ թե միայն այդ դեմքերից մեկն ունեցող ենթակայի⁴:

Դիմաթվին նշանակությունների այս երկու առանձնահատուկ կիրառությունները նուրբ տարբերություն ունեն, որոնք պարզ են դառնում խոսքի մեջ:

Փոխաբերական նշանակությունը բնորոշ է նրանով, որ խոսքի մեջ դանդաղան նպատակներով դիմաթվին մի ձևը գործածվում է մի ուրիշ ձևի փոխարեն՝ արտահայտելով վերջինիս իմաստը: Դեմքի հետ փոխարինական կիրառությամբ կաշող է հանդես գալ նաև թիվը:

Բայական դեմքի և թվի փոխարինական նշանակություններն ու կիրառությունները հնարավոր է որոշել ու մատնանշել միայն այն դեպքում, երբ դեմքը և թիվը դիտվում են քերականական ձևա-իմաստային միասնության մեջ, իրեն որոշակի ձև և որոշակի իմաստ ունեցող կարգեր:

Առաջին դեմքի որոշակի-դիմաթվին նշանակությունը բնորոշ է նրանով, որ այն հանդես է գալիս իրեն խոսողի դեմք՝ արտացոլված բայով արտահայտվող գործողության, եղելության, գրության մեջ: Այս դեմքի բայաձևերի կիրառության ժամանակ նախադասության քերականական ենթական և խոսողը համընկնում են ամբողջովին կամ մասամբ, քանի որ զրանցով խոսողը (կամ խոսողները) իր իսկ գործողությունը, եղելությունը, գրությունը ներկայացնելուց բացի, կարող է ներկայացնել նաև քերականական դեմքով իրենից տարբեր, բայց իր կողմում հանդես եկող այլ ենթակաների գործողությունը, եղելությունը կամ գրությունը ոչ թե այդ ենթակաների, այլ իր դեմքով:

Այս հիմունքով էլ առաջին դեմքը եզակի թվում արտահայտում է խոսող անհատի գործողությունը, եղելությունը կամ գրությունը:

Հոգնակի թվում բայի որոշակի-դիմաթվին նշանակությունը նույնն է դիմաթվին հարաբերության արտահայտման տեսակետից: Բայց քանի որ այս դեպքում գործողությունը կատարողը կամ եղողը մի առարկա չէ, այլ մեկից ավելի առարկաներ, որոնք առնվում են իրեն դիմաթվին մի կողմ, բայ-ստորոգյալից դուրս իրեն ենթակա կարող են քերականական-բառական տարբեր արտահայտություններ ունենալ: Սակայն այդ տարբեր արտահայտություններով նրանք իրենց գործողությունը, եղելությունը կամ գրությունը գրանցող բայ-ստորոգյալի մեջ դիմաթվին տարբեր հարաբերություններ չեն ստեղծում, և բայը հանդես է գալիս առաջին դեմքով, բայց հոգնակի թվով: Իսկ եթե այդ առարկաները գործողությամբ ևս նախադասության մեջ հանդես գան դիմաթվին տարբեր հարաբերություններով, պարզ է, որ բայ-ստորոգյալի մեջ կունենանք ոչ թե հոգնակի թվի առաջին դեմք, այլ ամեն մի դիմաթվին հարաբերության համար մի առանձին դեմք: Հոգնակի թվի բայ-ստորոգյալի մոտ խոսող կողմը տրամաբանորեն միշտ հոգնակի է լինում, իսկ քերականորեն կարող է ունենալ տարբեր արտահայտություններ (մեկից ավելի առարկաների համախմբում՝ յուրաքանչյուրի եզակի նշումով, ինչպես՝ ես, դու, նա զնացինք, ես, դու, Սուրենը զնացինք, ես, Գրիգորը, Սուրենը զնացինք), դերանվանական հոգնակիություն կամ անվանական

4 Հմմտ. «Грамматика русского языка», т. I, Фонетика и морфология, М., 1952, էջ 471:

հոգնակիություն՝ դիմորոշ հոգի գուգակցումով, ինչպես՝ մենք գնացինք կամ (մենք՝) ուսանողներս գնացինք)։ Մյուս դեմքերից տարբերվելու համար բոլոր դեպքերում խոսող կողմում պետք է լինի առաջին դեմքի գաղափարը, հետևաբար որքան էլ շատ լինեն եզակի թվով թվարկվող ենթակաները, նրանցից մեկը անպայմանորեն պետք է արտահայտված լինի առաջին դեմքի անձնական դերանվամբ, այլապես գործող կամ եղող առարկաների անունների թվարկումով նրանց գործողությունը, եղելությունը կամ դրությունն արտահայտող բայ-ստորոգյալի մեջ առաջին դեմքի գաղափարը չի կարող արտահայտվել։

Հոգնակի թվով արտահայտվող առաջին դեմքի դիմային ձևերի ենթակաների շարքում կարող են գործածվել նաև երկրորդ ու երրորդ դեմքի ենթականեր, սակայն դիմային տեսակետից նրանք որոշիչ դեր չեն կարող ունենալ բայ-ստորոգյալի դեմքի համար, եթե նրանց շարքում առկա է առաջին դեմքի համապատասխան դերանվան միջոցով (նույնպիսի հարաբերություն ունի երրորդ դեմքի երկրորդի նկատմամբ)։

Այս հանգամանքների հաշվառումով տեսնում ենք, որ բայի հոգնակի թվի առաջին դեմքի որոշակի-դիմային նշանակությունը մեկ իմաստային դժով ամբողջական լինելով՝ բոլոր կիրառության և գործող կամ եղող առարկաների ներքին հարաբերության ունենում է նրբերանգներ։

Հոգնակի առաջին դեմքով արտահայտված բայը հանդես է գալիս կիրառական և իմաստային հետևյալ նրբերանգներով՝

ա) Դրսեություն է մի այնպիսի խմբի գործողությունը, եղելությունը կամ դրությունը, որի մեջ մտնող անհատներից յուրաքանչյուրը հավասարապես և՛ գործող, եղող է, և՛ խոսող (կամ գրող)։ Այս դեպքում խոսքային պայմաններում իբրև խոսող (կամ գրող) ներկայանում են կամ բոլոր անհատները միասին, կամ նրանց բոլորի անունից արտահայտվում են մեկից ավելի որոշ անհատներ (կամ մի անհատ. այդ մասին՝ ստորև)։

Գեղարվեստական գրականության մեջ էլ բացառված չէ դեմքի այնպիսի կիրառությունը։ Ինչպես՝ «Այդ մենք եմք զալիս... Մե՛նք, բանվորներս՝ ապրելու ա՛հից՝ կյանքի շուկայում ստոր վաճառքից—էժան ծախվածներ...» (Շ. Կուրդինյան, «Բանվորներ»)։

Այս դեպքերում խոսող (կամ գրող) և գործող կամ եղող անհատները քանի որ դիմային մի կողմ են կազմում, բնահանրանում են մեկ-ի մեջ։ Ուրիշ պայմաններում մեկը՝ դերանունը կարող էր շարտահայտվել, կարևորն այդ չէ, այլ այն, որ իմաստային հարաբերությունը, որով հնարավոր է գործող կամ եղող առարկաների իմաստները բնահանրացնել մեկ-ի, այսինքն՝ հոգնակի առաջին դեմքի գաղափար ունեցող անձնական դերանվան մեջ։

բ) Արտահայտում է մի այնպիսի խմբի գործողությունը, եղելությունը կամ դրությունը, որի անունից հանդես է գալիս նույն խմբի մեջ մտնող անհատներից միայն մեկը, որը խոսողն է. սա թեև անձնական դերանվան հոգնակի առաջին դեմքի մեջ իմաստային բնահանուր արտացոլում գտնելուց բացի, խոսքի մեջ կարող է բառական-քերականական առանձին արտահայտություն էլ ունենալ (արտահայտվելով անձնական դերանվան եզակի թվի առաջին դեմքով կամ հեղինակի, պատմողի կողմից կողմնակիորեն նշվելով իր իսկ անվանումով), սակայն իբրև գործող կամ եղող անձ իր գործողությունը, եղելությունը կամ դրությունը չի անջատում տվյալ խմբի անհատների գործողությունից, եղելությունից կամ դրությունից։ Այդ պատճառով էլ բայն արտահայտվում է ոչ միայն առաջին դեմքով, այլև հոգնակի թվով։ Սրինակ՝ «Գնաց, կանգնեց Դավիթ առաջ. էսպես խոսեց էն ծերունին... Խեղճ մարդիկ եմք՝ պակաս օրով, Մենք քեզ վնաս ի՞նչ եմք արել» (Հ. Բումանյան, «Սասունցի Դավիթ», XXI)։

Այստեղ դիմային հարաբերությունն այնպես է, որ մի կողմ կազմող զինվորներից ամեն մեկը առանձին կարող էր ասել՝ «Խեղճ մարդ եմ՝ պակաս օրով, էս քեզ վնաս ի՞նչ եմ արել»։ Դա նշանակում է, որ դիմային հարաբերությունը նույնն է։ Իսկ երբ այդ բոլոր անհատների անունից հանդես է գալիս մեկը և իր ու մյուս բոլորի գործողությունը, դրությունը ներկայացնում է միասնարար, դիմային այդ նույն հարաբերության հետ բայերի մեջ հանդես է գալիս նաև հոգնակի թվի գաղափարը։

Յուրաքանչյուր անհատ իր համար ես է։ «Բոլոր մարդիկ ես են».— գրել է Վ. Ի. Լենինը։ Միայն նրանցից թեկուզ և երկուսը միմյանց նկատմամբ ես լինել չեն կարող, քանի որ ամեն մեկն իր համար է ես։ Տարբեր անհատներ միմյանց հանդեպ կարող են լինել ես, դու, նա, բայց նախադասական դրան՝ բոլոր անհատները խոսքային հանգամանքներում կարող են սշվել առանձին խմբավորումներով կամ ամբողջական առումով կարող են միավորվել մեկ-ի մեջ։ Այս պատճառով էլ հնարավոր է լինում նախադասության մեջ նրանց գործողությունը, եղելությունը կամ դրու-

թյունը բայ-ստորոգյալով արտահայտել հոգնակի թվի առաջին դեմքով: Այս է պատճառը նաև, որ երբ նախադասության մեջ զործող կամ եզոդ անհատներից մեկը ներկայանում է առաջին դեմքով, իսկ նույն զործողությունը կատարող կամ եզոդ մյուս անհատները արտահայտվում են տարբեր՝ երկրորդ կամ երրորդ դեմքերով կամ առարկայական անվանումներով (նույն է թե երրորդ դեմքով), հնարավոր է լինում նրանց զործողությունը, եղելությունը կամ դրությունը ներկայացնող բայ-ստորոգյալն արտահայտել հոգնակի առաջին դեմքով, իսկ եթե առանձին-առանձին եզակի թվով ու տարբեր դեմքերով են արտահայտված, միավորել մի բայածնում՝ արտահայտելով հոգնակի առաջին դեմքով (տվյալ դեպքում):

Հոգնակի առաջին դեմքի բայ-ստորոգյալը կարող է լինել այսպիսի բաղմակի ենթակաների զործողության, եղելության, դրության արտահայտիչ, ըստ որում այդ այսպիսի բաղմակի ենթակաների մեջ մեկը պետք է լինի առաջին դեմքով:

Ըստ այսմ էլ՝

ա) Բայ-ստորոգյալի հոգնակի թվի առաջին դեմքի մեջ միասնաբար կարող է արտահայտվել խոսողի և նրա խոսակցի զործողությունը, եղելությունը կամ դրությունը: Դա լինում է այն դեպքում, երբ զործող կամ եզոդ առարկաները առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների արտահայտությամբ հանդես են գալիս իրեն ևնթակա՝ միևնույն զործողությամբ, եղելությամբ կամ դրությամբ: Ինչպես՝ «Ես ու դու էլ շղթավաճ եմք իրարու, կարոտավառ երազում եմք միշտ իրար...» (Վ. Տերյան): Այստեղ խոսողն ու իր խոսակցիցը երկու տարբեր դեմքերի անձնական դերանուններով արտահայտված լինելով՝ դիմային հակադրություն են կազմում իրեն դերանուններ, բայց շղթավաճ եմք, երազում եմք դիմավոր բայերով արտահայտված նրանց զործողությունն ու դրությունը այդպիսի հակադրություն չունեն, նրանք միասնական են: Այստեղ պարզ կերպով երևում են դալիս դերանվանական և բայական դեմքի տարբերությունը և յուրահատկությունները:

Իսկ ինչո՞ւ է այսպես: Ինչո՞ւ դերանվանական այդ դիմային հակադրությունը բայի մեջ վերանում է, և երկու դեմքի փոխարեն հանդես է գալիս մեկ դեմքի նշանակություն: Եա պետք է բացատրել նրանով, որ խոսողը (ևս) հանդես է գալիս երկու դեմքերի անունից՝ ե՛ր (առաջին դեմքի), ե՛ր երկրորդ դեմքի անունից, իր և խոսակցի զործողությունը, դրությունը իրեն խոսող ցուցադրում է միասնությամբ: Այստեղ բայի մեջ ենթակայի երկրորդ դեմքի դադարաբար կուլ է զնում առաջին դեմքի դադարաբարին, սակայն այդ ենթական յուրահատուկ արտացոլում է գտնում թվի մեջ: Բայ-ստորոգյալը թեև ըստ դեմքի արտացոլում է առաջին դեմքի ենթական, սակայն ըստ թվի արտացոլում է երկուսը միասին: Դրությունը նույնը կլինի, եթե դեմքով հակադրվող դերանուններն ենթակաները արտահայտվեն հոգնակի թվով. դիցուք՝ «Մենք ու դուք էլ շղթավաճ ենք իրարու, կարոտավառ երազում ենք միշտ իրար...»: Բայերի դիմավոր ձևերը մնում են նույնը:

բ) Այսպես էլ բայի հոգնակի թվի առաջին դեմքում միասնաբար կարող են արտահայտվել թե՛ խոսողի, թե՛ խոսակցի և թե՛ այլ առարկայի զործողությունը, եղելությունն ու դրությունը, եթե այդպիսիք նույնն են: Ինչպես՝ «Ես, դու և Դրիդորը (նա) զնալու եմք դյուղ» (Ակներախ է ևն. թակաների դիմային հակադրությունը, նրանցից յուրաքանչյուրը տարբեր դեմքի է. նախադասության մեջ առկա են դերանվանական բոլոր երեք դեմքերը (զոյականն էլ այդ հարաբերակցությամբ ներկայանում է երրորդ դեմքի կողմում), բայց բայ-ստորոգյալը առաջին դեմքով է: Խոսողը հանդես է եկել բոլոր դեմքերի անունից, իր դեմքով է ներկայացրել բոլորի զործողությունը:

դ) Հասկանալի է, որ բայ-ստորոգյալով կարելի է միավորել ու ընդհանրացնել և այնպիսի այսպիսի ենթակաների զործողությունը, եղելությունը կամ դրությունը, որոնց մեջ բացակայում է խոսակցի դեմքը, բայց երբ իրեն ևնթակա ներկայացված են խոսողը և ոչ-խոսակցից մի այլ առարկա (կամ առարկաներ), այլ խոսքով՝ առաջին և երրորդ դեմքերը: Ինչպես՝ «Ես և ընկերս նստել էինք քարին, հիացմունքով դաշտին էինք նայում և փոփոխում գտնել ծանոթ դյուղեր» (Ա. Բալունց, «Մուրոյի գրուցը») և այլն:

6 Մեր խնդիրը չէ ընդհանրապես քննել ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը. դա շատ մանրամասնությամբ ու խորությամբ ուսումնասիրված է աշխարհագրարի քերականադիտության մեջ: Հմմտ. Ստ. Պալաուսյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 191—194, Մ. Արեգյան, Աշխարհագրարի շարահիստիւն, Վաղարշապատ, 1912, էջ 160—172, Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահիստություն, Երևան, 1950, էջ 46—48, Վ. Առաքելյան, Հայերենի շարահիստություն, հատ. Ա. Երևան, 1955, էջ 183—213 և այլն: Այդ հարցին մենք անդրադառնում ենք միայն այն առումով, որքան դա նպաստում է բայի դիմային նշանակության արտահայտությունները բացահայտմանը:

Այսպիսի կիրառությունների մեջ խոսողը իր գործողությունը, նդելությունը կամ դրությունը չի հակադրում իր խոսակցի ու երրորդ առարկայի գործողությանը, նդելությանը կամ դրությանը: Այս պատճառով էլ խոսողը բոլոր այլադեմ բաղմակի ենթակաների մասին կարող է ասել մեկն. քանի որ ինքը մտնում է գործող և նդող առարկաների այդ խմբի մեջ: Հենց դրա համար էլ բայ-ստորոգյալն արտահայտվում է նրա դեմքով: Այս դեպքում, իհարկե, նկատի չունենք այն յուրահատուկ կիրառությունները, երբ այլադեմ բաղմակի ենթակաների բայ-ստորոգյալը դեմքով համաձայնվում է այն ենթակային, որին ավելի մոտ է գրված: Ինչպես՝ «Բնի դու պարզե կստանաս և թի մենք»⁷: Այստեղ էլ թեև արտաքուստ կստանաս երկրորդ դեմքով գրված ստորոգյալը որպես այդպիսին ծառայում է նաև մեկն ենթակայի համար, սակայն իրականում ղեղաված է վերջինի: Կստանանք ստորոգյալը, իսկ եթե ենթականերն արտահայտենք առանց անջատելու (դու և մենք), ապա վերոհիշյալ կանոնի համաձայն ստորոգյալը կրնա՝ անբանա մեկ բառի մեջ և կարտահայտվի հոգնակի առաջին դեմքով (կստանանք):

Ըստ վերը հիշատակված բաժանման ժամանակակից արևելահայ դրական լեզվի բայի առաջին դեմքում նկատելի են երկուրդական նշանակությամբ հանդես եկող ընդհանուր-դիմա-լին կիրառությունը և մասամբ թվային փոխարինությունը:

Հոգնակի թվում առաջին դեմքը կարող է գործածվել ընդհանուր-դիմային նշանակությամբ: Օրինակներ. «...Եթե ամառվա տոթը շլինեմ, դարնան պատիվը շլինեմ հասկանա, եթե ձմեռվա ցուրտը շլինեմ, աշնան պատիվը շլինեմ հասկանա» (Բաֆֆի, «Ոսկի աքաղաղ», 1-ին մ., ԺԲ): «Մեզում եմ և կամա, ապրում եմ զարմացած, մեռնում եմ կարոտով...» (Ավ. Իսահակյան, «Սաղմունի վերջին դարուն»): «Մահի ժամանակ հո չեմ իմանա կյանքը: Դա պարզ է: Բայց կյանքի ժամանակ էլ երբեք չեմ իմանում մահը» (Դ. Դեմիրճյան, «Մտքեր կյանքի մասին»):

Ղեղծված բայերն արտահայտված լինելով հոգնակի առաջին դեմքով՝ միայն առաջին դեմքի հարաբերություն չունեն, դիմային հարաբերությունն իմաստային տեսակետից այստեղ ընդհանուր է: Դրանցով ներկայացվող գործողությունը, նդելությունը հավասարապես վերաբերում են բոլոր մարդկանց: Այսպիսի դեպքերում մեկն ենթակայի արտահայտումը չի կարող փոխել բայերի դիմային այս նշանակությունը, քանի որ այդպիսով մեկն դերանունն էլ առնվում է իրեն բոլոր մարդկանց փոխարինելու: Եվ, իսկապես, այն հատվածում, որից բերված է վերջին օրինակը, Դ. Դեմիրճյանը գործածել է այս նշանակությամբ բայ-ստորոգյալներ՝ մեկն ենթակայի հետ ինչպես՝ «Կյանքը պարապոքս է: Մենք միայն ապրում եմ և միայն մեռնում»: Դրությունը ոչնչով չի փոխվել. մեկն ենթակայի մոտ ապրում եմ, մեռնում (ենք) բայ-ստորոգյալները ընդհանուր-դիմային նշանակություն ունեն: Նդակի թվի առաջին դեմքում ընդհանուր-դիմային նշանակությունը ժամանակակից հայերենում շատ հազվադեպ է:

Առաջին դեմքում բայի դիմավոր ձևերը թե՛ նդակի և թե՛ հոգնակի թվում դիմային իմաստի փոխարինական կիրառություն չունեն, սակայն, ինչպես կտեսնենք ստորև, ուրիշ դիմավոր ձևեր նշանակության փոխարինությամբ կարող են հանդես գալ այս դեմքի իմաստով:

Առաջին դեմքում փոխաբանական նշանակությունը միայն թվային է, ըստ որում այն սովորաբար երևան է գալիս հոգնակի ձևի մեջ: Դա առաջին դեմքի հոգնակի թվի այնպիսի կիրառություն է, երբ հոգնակի ձևի տակ ներկայացվում է նդակի թվի զաղափարը: Այդպիսի նշանակությունը ըստ կիրառական նուրբ տարբերությունների կարելի է բաժանել երկու տիպերի:

ա) Հեղինակային հոգնակություն⁸, երբ սովորաբար գրավոր խոսքում, շարադրանքի մեջ կամ նաև բանավոր խոսքում՝ ղեկուցումների, դասախոսությունների, ելույթների ժամանակ զրոյր կամ խոսողը բայ-ստորոգյալները գործածում է հոգնակի առաջին դեմքով՝ համեստաբար: Թաքցնելով իր եսը կամ, ընդհակառակն, հոգնակի ձևով ներկայացնելով ու ղեղծելով իր գործողության կարևորությունը: Օրինակներ. «Ահավասիկ մեկ կանգնած եմ այժմ բաց հրապարակի վերա և, թշնամիների ղեկերից անխոցելի մնալու ակնկալությամբ, պատենե չեմ կանգնեցնում մեր առջև զանազան սուտ սկզբունքներ, սուփեստական զաղափարներ, որոնց չեմ հավատում, որ չեմ ունենում և որ մեծում եմ միահամուտ: Մեք խոսում եմ պարզ, այնպես, ինչպես առանց կարմրելու կարող էինք մեր բանականության հաշիվ ու համար տալ մեր ասածների համար... Մեք ազատակամ նվիրեցին մեզ հասարակ ժողովրդի իրավունքը՝ պաշտպանելու: Մեռանք և զրիշ չնվիրեցին հարուստներին, նոքա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են...» (Մ. Նալբանդյան, «Երկու տող»):

⁷ Տե՛ս Ս. Ս. Պալասյան, նշվ. աշխ., էջ 174:

⁸ Հմմտ. «Грамматика русского языка», т. I, Фонетика и морфология, М., 1952, էջ 469:

բ) Փոխարինական խոսակցական հոգնակիություն. խոսակցական լեզվում պատահում է, որ խոսող անհատը անհամար գզալով իրադրությունից, իրեն վերաբերող հատկանիշից կամ այլ զրգապատճառով աշխատում է իրեն չներկայացնել իրեն անհատ, իր իսկ գործողությունը, եղելությունը կամ գրությունը ցուցադրում է իր դեմքով, բայց հոգնակի թվով: Օրինակներ. «...Լա՛վ, շատ լավ,—սկսեց բարձրաձայն խոսել ինքնիրեն Հոսոպը—...Հոսոպ որ սառանք, նամուն էլ կտրցի՞նք...» (Նար-Գոս, «Հոսոպ»):

«...Ամեն օր մի քանի բաժակ տաք ջուր տալով մեծ բա՛ն ենք արել, ի՞նչ էլ Շարար չունենիք, կասե՛իք, մի երկու կտոր շաքարն ի՞նչ բան է որ»

—Բան չկա, մի օր թեյ չխմելով չենք մեռել,—ասաց Պաարիկյանը...» (Նույնը, «Նեղ օրերից մեկը»):

Ընդգծված բայաձևերը արտահայտված են հոգնակի առաջին դեմքով, սակայն պարզ երևում է, որ նրանք խոսող անհատի (եզակի ենթակայի) գործողություն ու եղելություն են ցույց տալիս:

Հագվազեպ կիրառությամբ հանդիպում է նաև եզակի ձևով հոգնակի փոխարինություն, այսինքն լինում է այնպես, որ հոգնակի ձևը փոխարինվում է եզակի ձևով, և վերջինիս միջոցով արտահայտվում է հոգնակիի գաղափարը: Ինչպես «—Ձէ, արվեստագետը պետք է միշտ ազատ լինի, որ ստեղծագործի լիասիրտ և արդյունք տա: Իսկ մենք ինչ գրել ենք կամ գրում ենք՝ կատարում ենք ուրիշ գործերի ու պաշտոնի արանքում: Երում ենք վազեմազ, թե շուտ անեմ մեքազենա, թե չէ պաշտոնի հետ կապված բաները կզան կխանդարեն» (Ստ. Զորյան, «Հուշերի դիրք», էջ 228): Ստ. Զորյանը մեջ է բերել Վ. Փափազյանի խոսքերը: Երբ Փափազյանն ասում է «մենք գրում ենք», նկատի ունի իրեն և իր նման արվեստագետներին, շարունակության մեջ «շուտ անեմ վերջացնեմ» արտահայտությունը եզակիով է, սակայն հավասարապես վերաբերում է «մենք»-ին: Բայց ի՞նչպես կարող էր այդ լինել: Հեղինակը կարող է լուրջալի մտածած լինել, թե այդպես վարվում է իր արվեստակիցներից յուրաքանչյուրը, այսինքն այսպես՝ «Գրում ենք վազեմազ, յուրաքանչյուր մտածելով, թե շուտ անեմ վերջացնեմ...»: Բայց քանի որ քերականորեն այդ այդպես չի արտահայտված, եզակիի իմաստային տարրերակումը չի բնկալվում, եզակի ձևը ծառայում է հոգնակիության արտահայտման համար:

ՆԵԼԵՐՈՐԱ ՎԵՄԲԻՐՈՐՆԱՅԻՆ ԵՐԻՄԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ բնորոշ է խոսակցի գործողության, եղելության կամ գրության արտահայտումով: Այստեղ արդեն ենթակայի ու խոսողի ոչ լիակատար և ո՛չ էլ մասնակի համընկում չկա, քանի որ բայը ներկայանում է իրեն խոսողությանը մասնակցող, բայց խոսողին իրեն խոսակցի հանդիպողովույն կողմի գործողության, եղելության կամ գրության արտահայտիչ, ուստի և խոսողի դեմքը չի ներառվում այդպիսի բայ-ստորոգյալի մեջ: Այս դեմքով արտահայտվող բայ-ստորոգյալի համապատասխան քերականական ենթական և խոսակցին են համընկնում: Սակայն խոսակցի հետ ենթակայի դերում կարող է լինել նաև այլ առարկա (կամ առարկաներ), որը դեմքով տարբերվում է խոսակցից, բայց որի գործողությունը, եղելությունը կամ գրությունը հանդիպում է խոսակցի գործողության, եղելության կամ գրության հետ միասին և ներկայացվում խոսակցի դեմքով:

Ըստ այդմ էլ բայը երկրորդ դեմքի եզակի լվում արտահայտում է խոսակցի անհատի գործողությունը, եղելությունը կամ գրությունը, այնպիսի անհատի, որը խոսողի համար առ է (անկախ նրանից՝ բառացի արտահայտվում է, թե ոչ): Օրինակ՝ «Գո՛ւ անհոգ նայեցի՛ր իմ վրա ու անցա՛ր քո նազով կանացի...» (Վ. Տերյան): «Կաճի երկիրը քեզ հետ, կմեծանաս դու...» (Ե. Սարյան, «Տարեկարծի երգը») և այլն:

Այստեղ նշանակությամբ համընկնում են խոսակցի անհատը և քերականական ենթական: Սակայն նախադասության մեջ իրեն ենթակա խոսակցից չի արտահայտվում իր իսկ առարկայական անվանումով, նրան փոխարինում է երկրորդ դեմքի զուգակցականը: Խոսակցի ենթական տվյալ նախադասության մեջ իր առարկայական անվանումով կարող է հանդես գալ լրացուցիչ ցուցադրումով՝ իրեն բացահայտիչ, համապատասխան դիմորոշ հոգով: Ինչպես՝ «Իսկ՝ պատանիդ կմեծանաս» և այլն: Կամ՝ իրեն կոչական, որպիսի գործածությունը շատ առարկական է, իսկ այս դեպքում էլ քերականական զուգակցական սովորաբար գեղջվում է: Ինչպես՝ «Երգի՛ր, պոետ, երգի՛ր, երգի՛ր երգը քամու, Երգի՛ր երգը սիրտ ու պայքարի...» (Ե. Չարենց, «Օվկիանի երգը»): Բայց և կարող է արտահայտվել: Ինչպես՝ «Իսկ՝ սուղվեցիր, մարտնչ՛ա, անկրակա՛ն այդ ծովը՝ նվ շրացած անձիր մեր գանձերի փառքից—Ուրա, ինչպես նավազ, որ գյուտերից գինով է...» (Ե. Չարենց, «Վալերի Բրյուսովին»):

Իսկ բնոճանուր խոսքի կամ բարդ նախադասության տարրեր մասերի մեջ խոսակցից իր իսկ առարկայական անվանումով ցույց տալու և խոսքային բնոճանուր պայմաններում գործողու-

թյունը, եղելությունը կամ գրությունը նրան վերագրելու բաղձաթիվ միջոցներ, ունեցող բաղձադաս-
դան հնարներ կան:

Երկրորդ գեմքի նաղնակի թվում բայի որոշակի-գիմային նշանակությունը ընդհանուր առմամբ
նույնն է եղակի թվի նույն գեմքի հետ, քանի որ բայը նույն խոսակցի գեմքով է արտահայտվում:
Ունեցող լինելով մեկից ավելի առարկաների գործողություն, եղելության կամ գրության արտա-
հայտիչ՝ հոգնակի երկրորդ գեմքով գրվող բայ-ստորոգյալը կարող է ընդհանրացնել միմյանց
նկատմամբ գիմային տարբերություն ունեցող ենթակաների գործողությունը, եղելությունը կամ
գրությունը: Բայց որքան էլ շատ լինեն իրեն խոսակցի գործող կամ եղող առարկաները և նրանց
բառային անվանումները՝ ենթակաները (նախադասության մեջ), նրանցից առնվազն մեկը պետք
է արտահայտված լինի երկրորդ գեմքի անձնական գերանվամբ, թեկուզ և եղակի թվով, և հետ-
և-հետից լինի այդ բոլորն ընդհանրացնել զուգ-ի մեջ, այնպես բայ-ստորոգյալի մեջ չի կարող
գրանցվել երկրորդ գեմքի գաղափարը: Ունեցողն մոտենալով շարահյուսական տեսանկյունից,
հաշվի առնելով նաև գործող կամ եղող առարկաների ներքին հարաբերությունները և ապա
սրանց ընդհանուր հարաբերությունը բայ-ստորոգյալի նկատմամբ՝ տեսնում ենք, որ հոգնակի
երկրորդ գեմքով արտահայտվող բայ-ստորոգյալը գրանցվում է՝

ա) խոսողի նկատմամբ հավասարապես խոսակցից հանդիսացող մեկից ավելի առարկաների
գործողությունը, եղելությունը կամ գրությունը: Այս գեմքում բոլոր խոսակցիներից յուրա-
քանչյուրը խոսողի նկատմամբ զուգ է, ուստի իրեն ենթականեր բոլորը կարող են միավորվել զուգ
ընդհանուր ենթականայի մեջ: Խոսողը նկատի ունենալով մեկից ավելի այնպիսի անհատների, որոնք
իր նկատմամբ հավասարապես խոսակցից են՝ կարող է ասել, զիցուք՝ «Դուք օրինակելիորեն եք
կատարում ձեր առաջադրանքը»: Բայց նա կարող է և բացահայտումով ասել՝ «Դուք՝ առաջավոր
բանվորներդ օրինակելիորեն եք կատարում ձեր առաջադրանքները», կամ՝ առանց զուգ-ի, բայց
անպայման գիմորոշ հոգի գործողությունով՝ «Առաջավոր բանվորներդ օրինակելիորեն եք կատա-
րում ձեր առաջադրանքները»: Զուգ-ի բացակայությամբ և առանց գիմորոշ հոգի նույն նախադա-
սության մեջ հնարավոր է իրականում գործող կամ եղող առարկաների ցուցադրումը կոչականի
գերով, երբ բայ-ստորոգյալի համար փրականական ենթակա է մնում զուգ-ը (թեկուզ և զեղչ-
ված): Սրինակ՝ «Ջարկեցե՛ք, գործինե՛ք, կռանք սալին...» (Հ. Հովհաննիսյան, «Արտավազդ»):
«...Կրակեցե՛ք, կրակեցե՛ք, խելագարված իմ ընկերներ...» (Խ. Ջարեկց, «Ամբոխները խելա-
գարված», IX) և այլն: Բայց նաև կարելի է արտահայտել զուգ-ը զգեղչելով՝ «Յ, գուք, ապակա-
ներ շնչին գավերի, ինչ եք քչիչում» (նույնը, «Ես այն չեմ այլևս») և այլն:

Բնչպես եղակի թվում, այնպես էլ հոգնակիում, գործողության, եղելության իրական տե-
րերը իրենց առարկայական անվանումներով կարող են ցույց տրվել խոսքային ընդհանուր պայ-
մաններում կամ բարդ նախադասության տարրեր մասերում՝ բոլորովին այլ պաշտոններով,
սակայն նրանց գործողությունը, եղելությունը կամ գրությունը կարող են ուղղակի կերպով ներ-
կայացվել հոգնակի երկրորդ գեմքով:

Երկրորդ գեմքի ու հոգնակի թվի գործածության մասնակ իրեն խոսակցությանը մասնակ
ցող գիմային հակադիր կողմ կարող են լինել անհատների ամբողջ խումբը (եթե բոլորը ներկա
են կամ նկատի են առնվում խոսքի մեջ), կամ այդ խմբի մի մասը, կամ էլ միայն մի խոսակցից,
որին խոսողը գիմում է որպես խոսակցիների ներկայացուցչի: Այսպես, օրինակ՝ «Դուք այսօր
քանի՞ գառ ե՛ք ունեցել» նախադասությամբ գաստիոսը կարող է գիմել կուրսի բոլոր ուսանող-
ներին կամ նրանց մի մասին, կամ էլ միայն մեկին՝ բաց իրադրություն:

բ) խոսողի նկատմամբ ոչ հավասարապես խոսակցից հանդիսացող այնպիսի այնպիսի են-
թակաների գործողությունը, եղելությունը կամ գրությունը, որոնցից միայն մեկն է արտացո-
լում երկրորդ գեմքի: Այս գեմքում երկրորդ գեմքի ենթականայի հետ հանդես է գալիս նաև
երրորդ գեմքի ենթակա (կամ երրորդ գեմքի գերանվամբ, կամ գոյականով), բայց ոչ երբեք
առաջին գեմքի ենթակա, քանի որ այդ գեմքում կառաջանա առաջին գեմքի միավորում: Այս-
տեղ խոսողի անմիջական խոսակցին է հանդիսանում միայն այն անհատը (կամ անհատները),
որին իրականում գիմում կամ որի հետ զրուցում է խոսողը, և որը իրեն փրականական ենթա-
կա արտահայտվում է նրա փոխարինիչ երկրորդ գեմքի գերանվամբ: Բայց նրա հետ հանդես
եկող երրորդ գեմքի ենթական (կամ ենթակաները) իրականում խոսողի անմիջական խոսա-
կիցը չէ՝ իր բուն առարկայական անվանումով կամ երրորդ գեմքի գերանվամբ փոխարինված:
Հասկանալի է, որ այդպես կարող է լինել այնպիսի միավորյալ նախադասության մեջ, որտեղ
երկրորդ և երրորդ գեմքի բաղձակի ենթակաների համար կա ընդհանուր բայ-ստորոգյալ՝ հոգ-
նակի երկրորդ գեմքի բայով (կամ այդպիսի հանդուցով): Սրինակ՝ «...Դու և Հակոբը իրար

ճանաչում եք» (Ս. Խանդավյան, «Ուստա Հեթումբ»)։ «Դու և նա վաղը պիտի գնաք քաղաք» և այլն։

Բերված օրինակները ցույց են տալիս, որ քերականական ենթակաները հավասարազեմ չեն, սակայն նրանց համապատասխան բայ-ստորոգյալներն արտահայտված են միայն մեկ ընդհանուր՝ երկրորդ դեմքով, բայց հոգնակի թվով։ Այստեղ էլ ենթականի երրորդ դեմքը բայ-ստորոգյալի մեջ կույ է գնում երկրորդ դեմքին։ Այսպիսի այլադեմ բաղմակի ենթակաների բայ-ստորոգյալի արտահայտման մեջ խոսողի համար զիմային հակադրության տեսակետից էական նշանակություն ունի խոսակցի դեմքը (երկրորդ դեմքը), իբրև խոսակցության մասնակցող հակադիր կողմի դեմք։ Այդ պատճառով էլ խոսողը միափոխելով խոսակցի և ոչ խոսակցի (կամ ոչ խոսակցիցներին) գործողությունը, եղելությունը կամ դրությունը արտահայտող բայ-ստորոգյալները բայական զիմավոր մի ձևի մեջ՝ ցուցադրում է միայն խոսակցի դեմքը։ Երրորդ դեմքը այստեղ զիմային արտացոլում չի գտնում բայ-ստորոգյալի մեջ։ թեև ենթակաները միմյանց նկատմամբ երկրորդ և երրորդ դեմքի արտահայտություն ունեն, սակայն խոսողի կողմից նրանք չեն հակադրվում իրենց զուգուրյամբ, եղելությամբ կամ դրությամբ, այլ, ընդհանրապես, առնչվում են մի ամբողջական խմբի մեջ։ Խոսողը այդ խմբից գործողությամբ, եղելությամբ կամ դրությամբ շանջատելով խոսակցին՝ բայ-ստորոգյալը ներկայացնում է նրա դեմքով։

Բայց ինչու է այսպես, ինչու է այդպիսի այլադեմ ենթակաների բայ-ստորոգյալը չի արտահայտվում երրորդ դեմքով։ Եա պետք է բացատրել նրանով, որ խոսողի տեսակետից այդ այլադեմ ենթականերով ներկայացվում է գործող կամ եղող առարկաների մի այնպիսի խումբ, որը դերանվանական ընդհանուր արտահայտությամբ հնարավոր է ընդհանրացնել զուգ-ի մեջ, հսկ այս դեպքում, պարզ է, բայ-ստորոգյալը նրան համապատասխանելով՝ կարտահայտվի երկրորդ և ոչ թե երրորդ դեմքով։ Այսինքն՝ բոտ մեր օրինակների զուգ և Հակոբ-ը, ոտ և Նա-ն միասին խոսողի համար զուգ են, ուստի նրանց գործողությունը, եղելությունը կամ դրությունը խոսողը ներկայացնում է հոգնակի երկրորդ դեմքով։ Բնչպես տեսնում ենք, ենթակաները այլադեմ են իրենց բառային առանձին արտահայտությամբ, սակայն միասին վերցված կարող են միափոխել հոգնակի երկրորդ դեմքի դերանվան մեջ։ Այստեղ յուրահատուկն այն է, որ հնարավոր է զուգ և Հակոբը (այսինքն՝ նա), զուգ և Նա ենթակաները ընդհանրացնել զուգ-ի մեջ ոչ թե այն պատճառով, որ խոսողի համար զուգ-ի հետ հավասարապես զուգ է նաև Նա-ն (և Հակոբը), այլ նրանով, որ ենթակաների այդ խմբում հիշատակվում է խոսակցի (զուգ), որի հետ կա նաև այդ առարկայի անվանումը կամ երրորդ դեմքի դերանուն փոխարինիչը։ Ետ և Նա խոսողի համար զիմային արտահայտությամբ նշանակ լինել չեն կարող, ուստի նրանց բայ-ստորոգյալը հոգնակի երրորդ դեմքով չի կարող արտահայտվել։

Այլադեմ բաղմակի ենթակաների զիմային միափոխման ու ընդհանրացման հնարավորության և բոտ այդմ էլ բայ-ստորոգյալը մի դեմքով արտահայտելու երևույթը տեսանք նաև բայի առաջին դեմքի կիրառական նշանակությունները քննելիս։ Քանի որ խոսվեց նաև հոգնակի երկրորդ դեմքի բայ-ստորոգյալի այլադեմ ենթակաների զիմային ընդհանրացման հնարավորության մասին, այժմ կարելի է ընդգծել այլադեմ բաղմակի ենթակաների դերանվանական ընդհանրացման հնարավորությունը իբրև բայի հոգնակի առաջին և երկրորդ դեմքերի կիրառության պայման։

Այժմ գանք երկրորդ դեմքի երկրորդական նշանակություններին։ Այս դեմքի բայաձևերն ունենում են զիմա-թվային ձևերի երկրորդական նշանակությունների բոլոր տիպերը։

ա) Թե՛ եղակի, թե՛ հոգնակի թվում երկրորդ դեմքով արտահայտվող բայը կարող է հանդես գալ անորոշ-զիմային նշանակությամբ։ Այս դեպքում խոսողը (կամ դրողը) նկատի է ունենում ոչ թե ընդհանրապես բոլորին՝ բոլոր անձերին, այլ՝ անորոշ խոսակցի կամ խոսակցիցների, որոնք նախադասության մեջ բառական արտահայտություն չունեն և ընդհանուր խոսքի մեջ էլ անորոշ են մնում, սակայն ցանկացած դեպքում խոսողը (կամ դրողը) կարող է բառացի ցուցադրել խոսակցիցներին և համապատասխան գործողությունը, եղելությունը կամ դրությունը վերադրել դրանց։ Օրինակներ.Յե ուղում ես երգը լսեն՝ ժամանակիդ շունչը ուսածը. — Կապվի՛ր նյարդով յուրաքանչյուր Քո օրերին ու քո դարին, Կյանքը սիրի Ե լիահնչուն Ու որ զավի՛ր քո քնարին» (Ն. Ջարենց)։ «Ես ում եմ... սուսակցեմ մի փոքր, ես ձեզ կպատմեմ բոլոր սկզբից... Ես ում եմ... լավ, ես կպատմեմ ծագիկներին ու խոսերին...» (Արաղի, «Արեր»)։

Երկրորդ դեմքի այսպիսի կիրառությունը ակնհայտորեն տարբերվում է ենթականի զեղծաս հայտնի դեպքերից։ Այստեղ միանգամայն հնարավոր է անձնական դերանվան երկրորդ դեմքի եղակի և հոգնակի թվի ձևերի արտահայտումը՝ իբրև ենթականեր, սակայն դա կլինի ձևակառու, քանի որ այդպիսով չի ցույց տրվի, թե իրականում ո՞վ է գործում կամ լինում, ում գործողու-

խյունը, եղելությունը կամ գրությունն է արտահայտվում համապատասխան բայ-ստորոգյալներով: Բայց, այդուհանդերձ, այստեղ դեմքն ընդհանուր չէ, կա որոշ սահմանափակություն ընդհանուր նշանակության հանդեպ: Խոսողը կարող է նկատի ունենալ որոշ մարդու կամ մարդկանց, բայց տվյալ դեպքում նկատի չի ունենում և գործողությունը, եղելությունը կամ գրությունը սրտակիրորեն չի վերադրում: Տվյալ կիրառությամբ դեմքի նշանակությունը մնում է անորոշ:

բ) Ընդհանուր-գիմային նշանակությունը սովորաբար արտահայտվում է այս դեմքի եզակի բնով: Այսպիսի նշանակությունը առաջին հերթին աչքի է ընկնում առածային կիրառություններով: Օրինակներ. «Շատ մի՛ ատի՜ր՝ սիրել կա, շատ մի՛ սիրի՜ր՝ ատել կա»: «Բարեկամի հետ կի՛ր ու խում ա՛րա, առուտուր մի՛ անի՜» (Ա. Ղանալանյան, «Հայկական առածանի», էջ 10): «Լավ է գիտունի հետ քար Բաշեա, քան անգետի հետ փլավ ուտես» (Նույն տեղ, էջ 59) և այլն: Նույնը ասվում է բոլորի, այդ թվում և ասողի համար, ուստի երկրորդ դեմքն այդ դեպքում լերարերում է բոլոր մարդկանց, որոնք կարող են հանդես գալ բոլոր երեք դեմքերով:

Սակայն մեր լեզվում բացառված չէ բայի երկրորդ դեմքի ընդհանուր-գիմային կիրառությունը առածներից դուրս, հազորովող մտքի արտահայտման կայուն դարձվածքային բնույթ չունեցող նախադասություններով: Օրինակներ. «Ինչ էլ կարճ է աշնան օրը... Ճիշտ է ասում Դադիկի պապը. «Առավոտյան հացի ես նստում, մինչև կշտանալի մթնում է» (Վ. Անանյան, «Հովազածորի գերիները», X):

Փոխարինական կիրառություններն այս դեմքում լինում են և՛ գիմային, և՛ թվային: Բայր եզակի թվի երկրորդ դեմքով կարող է գործածվել նույն թվի առաջին դեմքի նշանակությամբ: Խոսողը կամ գրողը իր իսկ գործողությունը, եղելությունը կամ գրությունը ուղղակիորեն ներկայացնելով՝ սովորաբար գործադրում է առաջին դեմքը, սակայն երբեմն արտաքուստ աշխատում է թաքցնել իր դեմքը, առաջին դեմքի բայաձևերը փոխարինում է երկրորդ դեմքով և իր իսկ գործողությունը, եղելությունը կամ գրությունը ներկայացնում է այդ դեմքով, բայց կիրառությունից հասկացվում է, որ խոսքը վերաբերում է առաջին դեմքին: Օրինակներ. «Օրերս անպտուղ, տխուր, ձանձրալի, Ու դնում եմ ես ունայն տրտունջով... էլ ո՛ւմ առաջին սիրտդ բաց անես, Ո՛ւմ համար երգես սրտալի երգեր, Ո՛ր չմին սիրես, կյանքդ նվիրես, էլ ինչպե՞ս ապրես անսեր, անրնկեր...» (Հ. Թումանյան, «Տրտունջ»): «Դա, իհարկե, ինձ ամենևին չի վիրավորում, քանի որ, գիտեմ՝ տղետ, իսակ տղաներ են՝ հովերով տարված: Բացի սրանից, երբ այդ աշակերտներին նախադասում ես շարության համար կամ մի քան հասկացնելու բարե գիտավորությամբ ապագայում ես մեկին, ամբողջ դասարանը բողբոջում է...» (Ստ. Զորյան, «Վերակացուն»):

Հատկապես պետք է ընդգծել, որ դեմքի այսպիսի փոխարինական կիրառության ժամանակ խոսողը կամ գրողը փաստորեն օգտվում է երկրորդ դեմքի վերը նշված անորոշ-գիմային և ընդհանուր-գիմային նշանակություններից, միայն յուրահատուկն այն է, որ խոսքային հանգամանքներում դուրսենալով ցուցադրելով իր գործողությունը, եղելությունը կամ գրությունը իր իսկ դեմքով արտահայտվող բայ-ստորոգյալներով՝ սրանց առկայությամբ ապահովում է երկրորդ դեմքի անորոշ-գիմային կամ ընդհանուր-գիմային նշանակությունների կոնկրետացումը, մասնավորումը իր (առաջին) դեմքի նկատմամբ:

Այսպիսի նշանակությունները կոնկրետանում են առաջին դեմքին փոխարինելու համար մանավանդ այն ժամանակ, երբ խոսողը կամ գրողը իր դեմքը նշում է նախօրոք (ինչպես մեր բերած օրինակներում): Բայց լինում են դեպքեր, երբ բայերը բերվում են անորոշ-գիմային կամ ընդհանուր-գիմային նշանակությամբ, ապա խոսքի շարունակության մեջ այս կամ այն կերպ առաջին դեմքի նշումով ցույց է տրվում, որ այդ ձևերով արտահայտված գործողությունը, եղելությունը կամ գրությունը վերաբերում է խոսողին (կամ գրողին): Այսպիսով խոսքի շարունակության մեջ է հասկացվում նրանց փոխարինական նշանակությունը առաջին դեմքի համար: Օրինակ՝ «Երբ նստում ես ու մտաբերում, թե այսինչ տարին այս պատահեց, այսինչ օրը՝ այս, զգում ես մի անծայր սփոփանք: Մանկության ամեն մի դեպք, յուրաքանչյուր մի անցք, լինի դա շնչին, ուրախ թե տխուր, անուշ է թվում: Մանկությունս հիշելով, չգիտեմ ինչու, նրա բոլոր օրերն էլ ինձ երևում են լուսադարձ...» (Ստ. Զորյան, «Ներկաթուղին»):

Ակներև է, որ դեմքի այսպիսի փոխարինական գործածությունը խիստ պայմանական է: Նման դեպքերում եթե երկրորդ դեմքի ձևերով արտահայտված բայերը տվյալ կիրառությամբ վերցնենք առաջին դեմքից բոլորովին անկախ, մենք գործ կունենանք նրանց անորոշ-գիմային կամ ընդհանուր-գիմային նշանակությունների հետ:

Այն էլ պետք է նկատել, որ այսպիսի փոխարինումների ժամանակ երկրորդ դեմքի օգտագործումը առաջին դեմքի նշանակության հանդեպ կարող է լինել համեմատաբար սերտ, բայց և թույլ կապով: Դա կապված է խոսքային հանգամանքների հետ, ինչպես որ տեսնում ենք վերը

բերված օրինակներում: Այստեղից էլ հասկանալի է՝ որքան թույլ է իմաստային կապը գեմքի փոխարինման մեջ, այնքան հեշտ կլինի երկրորդ գեմքի ձևերը համապատասխան նախադասութիւններով անջատել ամբողջ բնագրից՝ անորոշ-գիմային կամ բնդհանուր-գիմային նշանակութամբ:

Ելնելով երկրորդ գեմքի կիրառական այս յուրահատկությունից՝ այսպիսի փոխարինական զործասութիւնը կարող ենք համարել փոխարինություն գիմային զուգադրությամբ:

Բացի գիմային զուգադրությամբ հանդես եկող փոխարինական կիրառությունից, ժամանակակից գրական լեզվում բայի եզակի երկրորդ գեմքը առաջին գեմքին կարող է փոխարինել մի այլ զործասությամբ ևս: Դա հատկապես լինում է այն դեպքերում, երբ զրոգը կամ խոսողը դիմում է հենց իրեն՝ ուղղակի անվանելով կամ շանվանելով և իր իսկ զործողությունը, եզելութիւնը կամ գրությունը ներկայացնելով երկրորդ գեմքով, առաջինի փոխարեն: Եթե զրոգը կամ խոսողը բառացի չի նշում իրեն, ապա այնպես է արտահայտում իր մտքերը, որ խոսքի բովանդակությունից հասկացվում է, որ նկատի ունի իրեն: Օրինակներ. «էլ չես վերադառնա երբեք դու Ղարս՝ Տերյանի, Մահարու կամ քո երգի հունով» (Ե. Չարենց, «Ars poetica», I): Պարզ է, որ հեղինակը իր մասին է ասում և իր զործողությունը ներկայացնում է երկրորդ գեմքով: Կամ՝ «Դու քո երգով Ընդմիշտ կապված ես այս մեծ դարին» (նույն տեղ, XIII): Հաջորդ հատվածում արդեն հեղինակը ուղղակի հիշատակում է իր անունը՝ «Քայլի՛ր, Բայի՛ր քո ճանապարհով, Դու ո՛չ Գյոթե ևս, ո՛չ Վերհարն... Դու յոկ Չարենց ևս, միայն Չարենց...» (նույն տեղ, XIV): Իր իսկ անվան հիշատակումով հեղինակը որոշակիորեն պարզում է, որ դու անձնական գերանվան տակ նկատի ունի իրեն և գրան համապատասխան՝ բայ-ստորոգյալները առաջին գեմքի փոխարեն արտահայտել է երկրորդ գեմքով: Համեմատի՛ր նաև հետևյալը. «Դետինը թաց է, բայց կուշ եկած, համբերությամբ սպասում եմ: Կիվիվները շատ պտտվեցին ճահճուտի վրա, շատ ագմեկեցին: Ապա տեսան, որ ես իրենց արտոնից հեռանալու միտք չունեմ... հեռացան: Շրջապատը դատարկվեց: Համբերի՛ր, որսորդ, ուր որ է՝ հիմա կգան: Կարող են դալ և ինչ անձանոթ ուրիշ խմբեր. դե այն ժամանակ կրակիր երկու փողից էլ...» (Վ. Անանյան, «Կիվիվներ», «Երևան», № 529): Հասկանալի է, որ առաջին գեմքը բնդգծված ձևերում փոխարինված է երկրորդով: Հեղինակն այստեղ իրեն իսկ մի տեսակ խոսակցից է դարձնում իր համար և խոսքն ուղղում է իր խոսակցին, այսինքն տվյալ դեպքում իրեն: Ինչպես տեսնում ենք, այստեղ զուգահեռաբար երկրորդ գեմքի բայերի հետ բերված են և առաջին գեմքի բայեր, որոնք նույնպես զուգադրություն են ստեղծում: Սակայն նախորդ կիրառության համեմատությամբ այստեղ կա այն նուրբ տարբերությունը, որ այս դեպքում խոսողը չի օգտվում երկրորդ գեմքի անորոշ-գիմային ու բնդհանուր-գիմային նշանակություններից, այլ ուղղակի դիմում է իրեն և իր իսկ զործողությունն արտահայտում երկրորդ գեմքով:

Եթե զրավոր կերպով այսպիսի փոխարինությունը ներկայացվում է ոչ թե հեղինակի, շարադրողի, այլ զործող անձի գեմքի համար, ապա ուղղակի կամ հեղինակային լրացուցիչ խոսքում հիշատակվում է խոսող, զործող անձը, որպեսզի հասկացվի, որ երկրորդ գեմքով արտահայտված զործողությունը, եզելությունը կամ գրությունը վերաբերում է նրան:

Թատերական երկերում կա այն յուրահատկությունը, որ նախ նշվում է զործող անձի անունը, ապա այդ զործող անձի խոսքը ներկայացվում է ուղղակի կերպով, բայց որում զործող անձը խոսելիս կարող է դիմել հենց իրեն՝ իր իսկ զործողությունը, գրությունը կամ եզելությունը արտահայտելով երկրորդ գեմքով: Այս դեպքում զործող անձի խոսքում իր իսկ անունը հիշատակվում է, թե ոչ—էական չէ, բանի որ այն նախօրոք նշված է հեղինակի կողմից: Օրինակներ. «Լազար.— (Դողից ատամները կափկափելով, ղեսուցեն է բնկնում) Բր, բր, բր, բր... էս էլ քեզ նոր խաթա... Տեսնենք ո՞նց ես պրծնում» (Դ. Գեմիրճյան, «Քաջ նազար», III): «Լազար.— Հա՛յ, բախտդ սիրեմ, Քաջ նազար՝ էս էլ փերեցիր...» (նույն տեղ, IV): Միանգամայն ակներև է, որ բնդգծված բայաձևերով արտահայտված զործողությունը և եզելությունը իրականում վերաբերում են նազարին, բայց նազարը լինելով խոսող՝ գրանք չի արտահայտել իր իսկ գեմքով, փոխարինել է երկրորդով:

Այլ տիպի երկերում զործող անձն անվանվում է հեղինակային լրացուցիչ անուղղակի խոսքում, բայց կարող է նշվել նաև հենց ուղղակի խոսքում: Օրինակ՝ «էլի ապրեցիր, Միկիտան Սաքո...—ուրախ բացականչություններով գնում էր Սաքոն գեպի յուր գինետունը» (Պ. Պոռյան, «Հացի խնդիր», Ե):

Այս գեմքում րվային փոխարինությունն արտահայտվում է նրանով, որ քաղաքավարական կամ պաշտոնական վարմունքով խոսողը դիմում է խոսակցին և նրան վերաբերող զործողությունը,

եղելությունը կամ դրությունը ներկայացնում է հոգնակի թվով, փոխանակ եղակիով արտահայտելու: Օրինակներ. «—Շնորհակալ եմ, օրիորդ, դուք ինձ հասկանում եմ...» (Մուրացան, «Առաքյալը», Դ): «...Պարոն Ջարդարյան, այդ չէ պատճառը, երևի դուք վիրավորված եմ մեղանից...» (Շիրվանզադե, «Քառս», 1-ին մ., VIII): «Հարցելի հայրենակից... դուք ինձ չեմ նախաճառ, թեև վաղուց է, որ հարազատ մարդ եմ դարձել ինձ համար...» (Հր. Քոչար, «Գեներալի քույրը») և այլն: Խոսակցի գործողությունը, եղելությունը կամ դրությունը եղակիի փոխարեն հոգնակիով ներկայացնելը արդյունք է նրանց ենթակայի թվային նույնպիսի փոխարինության (դու-ի փոխարեն դուք-ի գործածություն):

Նկատված է, որ այս երևույթը մեր լեզվում նրան է կից լեզվական ազդեցությամբ. այստեղ վճռական դեր է կատարել ուսերենի ազդեցությունը⁹:

Հայտնի է, որ լեզուներում ընդհանրապես այս միջոցը գործադրվում է քաղաքավարական կամ պաշտոնական մոտեցմամբ, իսկ ընդհանրապես եթե խոսակցից եղակի է, խոսողը նրան դիմում է նույն թվով և նրա գործողությունը, եղելությունը կամ դրությունն էլ ներկայացնում է նույն թվով, բայց, օրինակ, անդլերենում եղակի երկրորդ դեմքը գրեթե լիովին դուրս է ընկնում գործածությունից, և թվային փոխարինությունը դարձել է ընդհանուր երևույթ ու գործադրվում է առանց վերահիշյալ նկատումների: Այնպես որ երկրորդ դեմքում թե՛ եղակի, թե՛ հոգնակի թվում գործածվում է հոգնակի թվի անձնական դերանունը—ենթական իր համապատասխան բայ-ստորոգյալով՝ անկախ նրանից՝ իրականում խոսակցից մեկ առարկա է, թե մեկից ավելի, օրինակ՝ you are going «դուք գնում եք» ասվում է թե՛ մեկ խոսակցի, թե՛ մեկից ավելի խոսակցիցների համար: Նախապես գործածվել է փոխարինությամբ, իսկ հետո վերածվել է հիմնականի՝ ամբողջովին դրավելով եղակիի տեղը: Սակայն հայերենում (և ոչ միայն հայերենում) եղակին թե՛ ձևով և թե՛ նշանակությամբ ունի իր հաստատուն տեղը, հետևաբար վերահիշյալ բնույթի կիրառությունները, դիտվում են իբրև դեմքի թվային փոխարինություն:

Մերուրդ դեմքի որոշակի-դիմային նշանակությունը բնորոշ է նրանով, որ հանդես է բերում խոսողին հայտնի, բայց խոսելու գործողությանը շփանակցող առարկայի կամ առարկաների գործողությունը, եղելությունը կամ դրությունը: Այս դեմքով արտահայտվող բայ-ստորոգյալի ենթական խոսողի նկատմամբ ունենում է դիմային այնպիսի հակադրություն, որ խոսողը նրան կարող է անվանել նա կամ նրանք դերանուններով: Բայց քանի որ ամեն մի առարկա, որը չի մասնակցում խոսելու գործողությանը, խոսողի ու իր խոսակցի նկատմամբ հանդես է գալիս իբրև դիմային երրորդ կողմ՝ խոսքի մասային տեսակետից շունենալով դիմային կարգի հատկանիշ. խոսողի կողմից իր իսկ առարկայական անվանումով կարող է հանդես բերվել նախադասության մեջ իբրև երրորդ դեմքի բայ-ստորոգյալի քերականական ենթակա՝ եղակիի դեպքում ունենալով եղակի թվով արտահայտված բայ-ստորոգյալ, հոգնակիի կամ մեկից ավելի առարկաների առանձին-առանձին թվարկվելու դեպքում՝ հոգնակի թվով: Ինչպես՝ «Բարակ հովիտ մեղմիկ սվսվում էր խոզանների վրայով, ծղրիլներ՝ մոտիկ ու հեռուն, ութմիկ ծղրտում էին, անտեսանելի հավիներ հնձած արտերի մեջ անուշ նրբությամբ էին, և ոչխարներ մնչում էին անհուն բարության» (Ավ. Իսահակյան, «Հովվերդություն»): «Ներսիս Բեկ էին որդի, հարս և բոոր (Ա. Բակունց, «Զորերի լույսը», 1) և այլն:

Այս դեմքով արտահայտվող բայ-ստորոգյալների մոտ այլադեմ բաղմակի ենթականեր չեն կարող արտահայտվել: Ինչպես տեսանք, այլադեմ բաղմակի ենթականեր կարող են լինել առաջին և երկրորդ դեմքով արտահայտվող բայ-ստորոգյալների մոտ: Բայի երրորդ դեմքի որոշակի-դիմային նշանակությունը ևս պայմանավորվում է նրանով, որ խոսողի համար երրորդ դեմքի արժեք ունեցող գործող կամ եղող առարկան (կամ առարկաները) հայտնի է լինում, որի առարկայական անվանումը կամ ուղղակի հիշատակվում է նույն նախադասության մեջ («Առաջավոր բանվորը գերակատարում է առաջադրանքը»), կամ ընդհանուր խոսքի մեջ՝ նույն նախադասությանից դուրս, բայց նույն նախադասության մեջ կարող է արտացոլվել երրորդ դեմքի անձնական դերանվամբ («Առաջավոր բանվորը գերակատարում է առաջադրանքը: Նա արժանանում է խախուսանքի», «Այդ մասին հարցրեք Վարդանին: Նա ձեզ կպատասխանի») և կարող է իր իսկ գործողությունը, եղելությունը կամ դրությունը դրսևորող բայ-ստորոգյալի մոտ անմիջական արտահայտություն չունենալ («Այդ մասին հարցրեք Վարդանին, և ձեզ կպատասխանի»): Այս քաղաքական դեմքերում էլ գործող կամ եղող առարկան խոսողին հայտնի է լինում, ըստ որում առարկայի անվանումը, եթե նույն բայ-ստորոգյալի մոտ նույն նախադասության մեջ է, հանդես է

⁹ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 587:

զալիս իրրեւ ենթակա, իսկ մյուս դեպքերում պարտադիր չէ, որ անպայման ենթակա լինի, իսկ այս դեպքում էլ ենթակա է լինում նրան փոխարինող գերանունը:

Եթեւ երրորդ դեմքով արտահայտվող ստորոգյալ ունեցող նախադասության մեջ գործող կամ եղող առարկան ներկայացվում է երրորդ դեմքի գերանվամբ, նույն ստորոգյալի մոտ այլ կերպ չի կարելի գործող կամ եղող առարկան ներկայացնել իր իսկ առարկայական անվանումով, քան միայն բացահայտչի ձևով: Ինչպես՝ «Նրանք փոքրիկ էին՝ երեխան ու կառույն, մեկտեղ խաղում էին տախտակների վրա...» (Ս. Նսենին, «Ընկերները», փոխադր. Ն. Չարենց):

Չենք ասում, թե ընդհանրապես բայի երրորդ դեմքով չի կարելի արտահայտել խոսողին անհատ առարկայի գործողությունը, եղելությունը կամ դրությունը: Իհարկե, կարելի է, բայց չա արդեն դուրս է այս դեմքի որոշակի-դիմային նշանակության սահմաններից:

Գալով երկրորդական նշանակություններին՝ պետք է ասել, որ այս դեմքում դրանք շատ ցայտուն են հանդես գալիս մեր լեզվի մեջ: Ժամանակակից հայերենում բայը երրորդ դեմքով հաճախ է գործածվում անորոշ-դիմային, ընդհանուր-դիմային և փոխարինական նշանակություններով:

Անորոշ-դիմային նշանակությունը երրորդ դեմքում սովորաբար արտահայտվում է հոգնակի թվով: Դիմային նշանակությունը մնում է երրորդ դեմքի սահմաններում, սակայն անորոշ է լինում գործող կամ եղող առարկան: Տվյալ դեպքում գործողությունը, եղելությունը կամ դրությունը որոշակիորեն չի վերադրվում խոսողի նկատմամբ երրորդ դեմքի դիրք ունեցող հայտնի առարկաների: Օրինակներ. «Հազիվ նա ելել էր պատշգամբ և ձեռքը տարել ծոցը, որպեսզի հուշատետրը հանե, և ահա տան մուտքի հնչակը փառացին» (Մուրացան, «Առաքյալը», Դ): «Դուրս գրսից ծեծեցին» (Նար-Դոս, «Հողուն վրա հասավ»): «Ձանդը տվին: Բիքորը վեր թռավ» (Հ. Թումանյան, «Գիքորը», 5): «Հասարթյանին կանչեցին շրջկոմ» (Ս. խանգաղյան, «Հողը», 2-րդ գ., 2-րդ մ., 1):

Ակներև է, որ դեմքի այսպիսի կիրառությունը որոշակիորեն տարբերվում է այն դեպքերից, երբ համապատասխան բայ-ստորոգյալի ենթական հայտնի լինելով՝ այս կամ այն պատճառով նրա մոտ չի արտահայտվում, զեղչվում է: Անորոշ-դիմային նշանակություն ունեցող բայ-ստորոգյալով նախադասությունը հաճախ ներկայանում է շարահյուսական այնպիսի արտահայտությամբ, որ թվում է, թե համապատասխան ենթական որոշակի է: Սակայն իրականում այդպես չէ: Այդպիսի ցայտուն օրինակներ կան վերը բերված նախադասությունների մեջ. վերջիններս չրանցից մեկը՝ «Հասարթյանին կանչեցին շրջկոմ»: Դրանով այն միտքն է արտահայտվում, որ Հասարթյանին հրավիրել են շրջկոմ, բայց ո՞վ. իհարկե, հասկացվում է, որ կանչել են շրջկոմում աշխատող մարդիկ, բայց դրանք շրջկոմում աշխատող բոլոր մարդիկ են անխտիր, թե՛ քարտուղարները, բաժնի վարիչները, հրահանգիչները կամ գուցե և դրանցից մեկը—հայտնի չէ, ուստի և անորոշ է մնում ենթական, անորոշ է մնում բայ-ստորոգյալի դիմային նշանակությունը:

Այս դեմքի ընդհանուր-դիմային նշանակությունը ևս սովորաբար հոգնակի թվով է արտահայտվում: Այս դեպքում սովորաբար միտքը հաղորդվում է առածական ձևով կամ ասվում է իրրեւ բոլոր մարդկանց համար պարտադիր, բոլորի կողմից ընդունվող և առարկություն չվերցնող հայտնի ճշմարտություն: Օրինակներ. «Շիտակ խոսքը հանքով կասեն» (Ա. Ղանալանյան, «Հայկական առածանի», էջ 57): «Փորձածը նորից չեն փորձի» (նույն տեղ, էջ 46): «Ձմտածեց, որ կրակը կրակով չեն հանգցնում» (Շիրվանզադե, «Քառոս», 2-րդ մ., VI): «—Է՛լ, Սուրեն, այդպես շուտ չեն մոռանում վաղեմի ընկերոջն և բարեկամին...» (Նար-Դոս, «Ճշմարիտ բարեկամը», II): «—Պտղատու ծառին շատ քար կգցեն...» (Հ. Թումանյան, «Աղքատի պատիվը», I) և այլն:

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, այստեղ բայերի արտահայտած դիմային նշանակությունը որոշակիորեն տարբերվում է վերը օրինակներով ցույց տրված անորոշ-դիմային նշանակությունից, իսկ երկուսն էլ իրենց հերթին տարբերվում են նույն դեմքի որոշակի-դիմային նշանակությունից:

Բայի երրորդ դեմքի ձևերում բավական աչքի են ընկնում դիմա-թվային փոխաբերական կիրառություններ: Այսպիսի կիրառությամբ այս դեմքի ձևերը կարող են փոխարինել առաջին դեմքի ձևերին: Պետք է նկատի ունենալ այդպիսի փոխարինության հետևյալ դեպքերը.

ա) եզակի թվի երրորդ դեմքը փոխարինում է նույն թվի առաջին դեմքին՝ խոսքի մեջ այս երկու դեմքերի զուգադրական գործածությամբ: Ինչպես՝ «ԱնԴՐԵԱՍ. Ճշմարիտ է, ընկերներ ենք եղել, բայց չէ որ փողն ես եմ աշխատել. ես, Անդրեաս էլի դարձա: Դալլաք էլի դժար է թուր իր բոլոր կարողությունը, դիրքը, անունը, պատիվը նեո՛ւ է բերել իր խելքով ու աշխատանք»:

քով: Տասնուհինգ տարի ծառայել եմ Մուսայել աղայի մոտ, տաբել եմ նախատինք, թուք ու մուր: Շան կյանք եմ Բաշել, վերջը սուտ-գործով մի քիչ փող եմ ձեռք բերել, դուրս եկել եմ այն ժամանակը րեկերացել Առաքել Օթարյանի հետ» (Շիրվանզադե, «Պատվի համար», 1, 6):

Ինչպես տեսնում ենք, խոսողն սկսել է առաջին դեմքով, հաջորդ նախադասության մեջ իր իսկ հատուկ անունը դարձնելով ենթակա՝ շարունակել է երրորդ դեմքով, իսկ նրանից հետո կրկին անցել է առաջին դեմքի: Դեմքերի այսպիսի դուրսգրությունները և խոսողի կողմից իր իսկ անվան հիշատակումով պարզ երևում է, որ երկրորդ նախադասության ստորոգյալը («ձեռք է բերել») արտահայտված լինելով երրորդ դեմքով՝ ցույց է տալիս խոսողի գործողությունը, այսինքն նշանակությամբ փոխարինում է առաջին դեմքին:

Նույն փոխարինության դեպքում խոսողն ուղղակի իր անունն է տալիս կամ «քո խոնարհ ծառան», «եղբայրդ» և նման այլ արտահայտություններով խոսակցին հասկացնում է, որ դորձողը կամ եղբոր ինքն է, ուստի և իր իսկ գործողությունը, եղելությունը կամ գրությունը ներկայացնում է եղակի երրորդ դեմքով. այս ձևով եղակի երրորդ դեմքը փոխարինում է եղակի առաջին դեմքին: Օրինակներ. «—Այո՛, սիրելիս, մոռացել ես, թե ուսանող ժամանակ քո խոնարհ ծառան ինչպես էր սենյակ փնտրում: Առաջ դիտում էի շրջակայքը...» (Շիրվանզադե, «Արսեն Դիմաքսյան» 1-ին մ., 11): «Սեյրանը բռնեց նրա (Սուսանի—Ա. Ա.) ձախ ձեռքը:

—Ինձ փոխում ես, Սուսան:

—Սուսանը լեզու չունի, Սուսանը աչքեր չունի, Սուսանը այս աշխարհում չէ, Սուսանը մեռել է, դե, ձեռք քաշիր,—պատասխանեց օրիորդը թույլ և զոզոռուն ձայնով» (Նույնը, «Նամուս», 1-ին մ., XII): «—Գյուլնարան նվեր է բերել, Գյուլնարան տրտունջ ունի, խան, Թույլ տուր, որ բոլորի հետ մեկտեղ, Գյուլնարան ղեկ ղցի չաղրան» (Գ. Սարյան, «Գյուլնարան»): Խոսում է Գյուլնարան իր անունից և իր անունը տալով, դրա համար էլ կատարվել է բայ-ստորոգյալների դիմացին փոխարինություն:

Երբեմն մտերմական խոսակցության ժամանակ հանդիպում ենք այսպիսի արտահայտությունների՝ «Եղբայրդ մի լավ զործ է արել, ե՛կ, տե՛ս», «Եղբայրդ հիվանդացել էր, չէիր իմացել»: Խոսողն այս ձևով դիմում է խոսակցին՝ «եղբայրդ» արտահայտության մեջ նկատի ունենալով իրեն և իր իսկ գործողությունը, եղելությունը, գրությունը ներկայացնելով երրորդ դեմքով: Իսկ եթե խոսողը կին է, նման դեպքերում գործածում է Բույրդ, մայրդ արտահայտությունները (կամ մի ուրիշ բառ, որը արտահայտում է այն հարաբերությունը, որով խոսողը իրեն ներկայացնում է խոսակցի հանդեպ): Հմտ. «—Մի՛ գարմանար, Մարիամ բաջի, Բույրդ եկել է քեզանից հալօվհալ իմանալու,—շարունակեց Գյուլնարը, ուշադրություն չդարձնելով Մարիամ բաջու կոպիտ պատասխանի վրա» (Շիրվանզադե, «Նամուս», 2-րդ մ., X): Խոսողը Գյուլնարն է, որը «բույրդ» արտահայտությամբ ներկայացնում է իրեն, և իր դալու մասին ասում է «եկել է»: Ժողովրդի մեջ շատ սովորական է, երբ մայրը դիմելով որդուն, ասում է՝ «Մայրդ Բողանա, քեզ ի՞նչ է պատահել», «Մայրդ մեռնի» և այլն, ինքն իր մասին է ասում երրորդ դեմքով: Համեմատիր, «—...Քողանա ինձ նման մերը,—ասաց պառավն ու լացակումեց» (Մուրացան, «Նոյի ազդավր», Դ): «...Քշվառ մայրը դիմում էր փլաթակներին ու կանչում:

—Ոսկի ջա՛ն, Հրանտիկ ջան, մի ձեն հանեցեք է, այ ձեր մեռն կուրանա, որ ձեզ էլ օրին չտեսնեք» (Վ. Անանյան, «Ոսկեհատը», 3):

Իհարկե, սա չի բացատրում թեկուզ և նման դեպքերում էլ բայի առաջին դեմքի գործածությունը: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ դիմացին այսպիսի փոխարինությունը առավել հատուկ է խոսակցական լեզվին և դրականում լայն տարածում չունի:

բ) Երրորդ դեմքով առաջին դեմքի փոխարինություն է կատարվում և հեղինակային խոսքի մեջ: Հատկապես դրքերի առաջաբաններում երբեմն հեղինակը իր ես-ը թաքցնում է հեղինակ բառի մեջ և այն ներկայացնելով իրեն ենթակա՝ իր իսկ գործողությունը, եղելությունը արտահայտում է երրորդ դեմքով: Այսպես, «Հեղինակն առավել սիրով ու գոհունակությամբ է հրաժարվել իր այդ սխալներից... նույնպիսի գոհունակությամբ հեղինակը նշում է... Տպագրության հանձնելով սույն աշխատությունը՝ հեղինակը հույս ունի...» (Գ. Սևակ, «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», էջ 12): Սա դիմացին փոխարինություն է, որովհետև հեղինակն իր գործողությունը, եղելությունը, գրությունը իր իսկ բերանով ներկայացնում է երրորդ դեմքով: Իհարկե, դիմացին փոխարինություն չի լինի այն դեպքում, եթե մի ուրիշը տվյալ հեղինակի մասին այսպես գրի, որը շատ է պատահում գրախոսականներում և քննադատական որևէ երկ բնութագրող խոսքում:

Դեմքի այսպիսի կիրառությունը կարելի է անվանել հեղինակային դիմափոխություն երրորդ դեմքով:

դ) Բայի երրորդ գեմքը հոգնակի թվում կարող է փոխարինել առաջին գեմքի եղակի թվին՝ բա լինում է այն ժամանակ, երբ խոսողը բայը ներկայացնում է առաջին գեմքի մթաղնումով և իր իսկ զործողությանը, եղելությանը կամ դրությունը անորոշ-գիմային նշանակության բնույթ է տալիս: Օրինակներ. «—Վա՛հ, զարմանալի մարդ ես, ա՛յ մարդ, քեզ հայերեն ասում եմ՝ չկա՛, չկա՛, քեռի ես չես: —Դե լավ, լավ, էլ ինչ ես նեղանում, չկա՛ ես էլ կղնամ մեր տունը» (Հ. Թումանյան, «Քեռի ես չես»): «—Ցուրտը տարա՞վ... վա՛հ, տնաշեն, Չես թող անում մի շունչ փաշեն, Հեշտ բան հո չի, հլա նոր եմ Ցրցամ տվել, թե որ կարեմ» (նույնը, «Շունն ու կատուն»): «—Ի՛նչ է, սրտիդ ղիպսն հա ա: Մի՛ վախենա, ես իսկի էլ քեզ չեմ նախատում» (Շիրվանզադե, «Քառս», 2-րդ մ., V) և այլն: Ակներև է, որ բնոյթով բայերը, որոնք արտահայտված են երկրորդ գեմքի հոգնակի թվով, առաջին գեմքի եղակի թվի նշանակություն ունեն. (շունչ) փաշեն — քաշեմ, ղիպսն = ղիպա, ասում եմ — ասում եմ:

Բայի երրորդ գեմքը երկրորդի փոխարեն մեր լեզվում շատ հազվագյուտ է հանդես գալիս: Դա հանդիպում է իրեն վերապրուկային երևույթ և մեր օրերում զործնական արժեք չունի: Խոսողը գիմելով խոսակցին (հատկապես մեծավորին)՝ նրա զործողությունը, եղելությունը կամ դրությունը երկրորդ գեմքի փոխարեն արտահայտում է երրորդ գեմքով: Ինչպես «Գալիս է մի հովիվ: Ասում է. — Թաղավորն ապրած կենա...» (Հ. Թումանյան, «Սուտասանը»): Դիմում է անմիջական խոսակցին, բայց երրորդ գեմքով:

Բոլոր գեմքերի իմաստային և կիրառական առանձնահատկություններին ծանոթանալուց հետո անհրաժեշտ է նկատի ունենալ նաև գիմափոխական այն իրողությունները, որոնք կապված են ուղղակի խոսքի անուղղակի զարգացում երևույթի հետ: Հայտնի է, որ հաճախ զրավոր կամ բանավոր խոսքում հարկ է լինում ուրիշի ուղղակի խոսքը զարգացնել անուղղակի, իսկ այս դեպքում ուրիշի ուղղակի խոսքը կրում է որոշ փոփոխություններ, այդ փոփոխությունների թվում է նաև բայ-ստորոգյալի գիմային փոփոխությունը: Այս դեպքում բայի մի գեմքը կարող է փոխվել մի ուրիշ գեմքի, ուստի դա պետք է գիտել իրեն գիմային փոխարինության յուրահատուկ երևույթ: Մեր քերականագիտությունը նշում է¹⁰, որ ուրիշի ուղղակի խոսքի անուղղակի զարգացում առաջին և երկրորդ գեմքերը փոխվում են երրորդի (եթե զլխավոր նախադասության և ուրիշի ուղղակի խոսքի ենթակաները տարբեր են): Ինչպես՝ Վարդանն ասաց. «Ես պայմանում եմ բարձր առաջադիմության համար», Գրիգորը Վարդանին ասաց. «Ինչու երիտ ուղի ես բնորել»: Բերված ուղղակի խոսքերում ունենք առաջին և երկրորդ գեմքի բայ-ստորոգյալներ (պայքարում եմ, բնորել ես), որոնք անուղղակի խոսքի մեջ կփոխարինվեն երրորդ գեմքով: Ինչպես՝ Վարդանն ասաց, որ ինքը պայմանում է բարձր առաջադիմության համար. Գրիգորը Վարդանին ասաց, որ նա ճիշտ ուղի է բնորել:

Եթե մեջ է բերվում խոսակցի խոսքի առաջին գեմքով, անուղղակի խոսքում այն կարտահայտվի երկրորդ գեմքով: Ինչպես՝ Ինչու երան ասացիր. «Ես մի պատմվածք եմ գրել», անուղղակի խոսքով կունենանք՝ Ինչու երան ասացիր, որ ինչի մի պատմվածք ես գրել: Այստեղ արդեն գրել եմ բայ-ստորոգյալի գիմաց ունենք գրել ես:

Այսպիսի գիմային փոխարինումներից բացի, ժամանակակից հայերենում հնարավոր է նաև երկրորդ գեմքի փոխարինումն առաջին գեմքով: Եղակի թվում դա լինում է ուրիշի այնպիսի ուղղակի խոսքի փոփոխության ժամանակ, երբ այն ուղղված է լինում մեջ բերող անհատին: Ինչպես՝ Նա ինձ ասաց, «Երբ տեղ կհասնես, անմիջապես հեռագրի՛ր», անուղղակի խոսքով կլինի՝ Նա ինձ ասաց, որ երբ տեղ կհասնեմ, անմիջապես հեռագրեմ:

Հոգնակի թվում այդ փոխարինումը լինում է այն դեպքում, երբ ուղղակի խոսքն ուղղված է լինում մի այնպիսի խմբի, որի մեջ մտնում է մեջբերում կատարողը, այսինքն՝ ուրիշի խոսքի շիջատակողը: Այսպես. Նա մեզ ասաց. «Երբ տեղ կհասնեմ, անմիջապես հեռագրեցե՛մ» կամ՝ Նա Գրիգորին, Վարդանին և ինձ ասաց. «Երբ տեղ կհասնեմ, անմիջապես հեռագրեցե՛մ», պատճառաբար կունենանք՝ Նա մեզ ասաց, որ երբ տեղ կհասնեմ, անմիջապես հեռագրեմ: Եթե զլխավոր նախադասության մեջ չճիշատակվի ուրիշի խոսքը մեջբերողը, անհնարին կլինի ուրիշի ուղղակի խոսքում հանդես եկող երկրորդ գեմքի բայ-ստորոգյալի անուղղակի խոսքի մեջ փոխարինել առաջին գեմքով: Եթե զլխավոր նախադասության մեջ ցույց է տրվում, որ ուղղակի խոսքը ոչ թե ուղղված է այն հիշատակողին, այլ նրա նկատմամբ երրորդ գեմքի գիրք ունեցող առարկայի (կամ առարկաների), անուղղակի խոսքի մեջ բայ-ստորոգյալը փոխարինվում է երրորդ գեմքով: Օրինակ՝ Նա Գրիգոր-

¹⁰ Ի. Ա. Բրեյդան, Աշխարհարարի շարահյուսություն, Վարդաշապատ, 1912, էջ 275.
Դ. Ս. Կ. Զայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1950, էջ 87:

րին ասաց. «Երբ տեղ կհասնես, անմիջապես հեռագրի՛ր» կամ՝ նա Գրիգորին և Վարդանին ասաց. «Երբ տեղ կհասնես, անմիջապես հեռագրեցե՛ք»։ Դրանք պատմողարար կլինեն՝ նա Գրիգորին ասաց, որ երբ տեղ հասնեն, անմիջապես հեռագրեն։ Իսկ եթե գլխավոր նախադասության մեջ հենց երկրորդ դեմքով էլ հիշատակվում է այն առարկան, որին ուղղված է ուղղակի խոսքը, այս դեպքում անուղղակի խոսքի մեջ դիմային փոխարինություն չի լինում։ Ինչպես՝ նա Բեդ ասաց. «Երբ տեղ կհասնես, անմիջապես հեռագրի՛ր», նա ձեզ ասաց. «Երբ տեղ կհասնես, անմիջապես հեռագրեցե՛ք» կամ՝ նա Բեդ և Վարդանին ասաց. «Երբ տեղ կհասնես, անմիջապես հեռագրեցե՛ք»։ որոնք պատմողարար կլինեն՝ նա Բեդ ասաց, որ երբ տեղ հասնես, անմիջապես հեռագրես, նա ձեզ ասաց, որ երբ տեղ հասնես, անմիջապես հեռագրեմ, նա Բեդ և Վարդանին ասաց, որ երբ տեղ հասնես, անմիջապես հեռագրեմ։

Ինչպես տեսնում ենք, դիմային փոխանակություն այս դեպքում չկա։

Այս բոլոր կիրառությունների զուգադրությամբ առավել ակներև է դառնում այն իրողությունը, որ ուրիշի ուղղակի խոսքը անուղղակի դարձնելիս ժամանակակից հայերենում բայի երկրորդ դեմքը բացի երրորդով փոխարինվելուց, փոխարինվում է նաև առաջինով, ուստի սա էս պետք է արձանագրվի մեր քերականագիտության կողմից իրեն մեր լեզվին հատուկ քերականական իրողություն։

Հայերենին հատուկ է նաև ուրիշի ուղղակի խոսքը անուղղակի խոսքի վերածելու ժամանակ բայի բոլոր երեք դեմքերի պահպանումը նույնությամբ (մասամբ այդ նշեցինք երկրորդ դեմքի առիթով), սակայն հարկ չենք համարում դրա վրա այստեղ կանգ առնել։

Ժամանակակից հայերենի բայի դեմքի ու նրա թվի իմաստային և կիրառական առանձնահատկությունների քննարկումից բխող եզրակացությունները ամփոփելով՝ հատկապես պետք է նկատի ունենալ հետևյալը.

1. Կենդանի խոսքում համապատասխան մտքերի արտահայտման պահանջով բայական դեմքը եզակի ու հոգնակի թվով հանդես է գալիս նշանակությունների բազմազանությամբ։ Այստեղ երևան են գալիս ինչպես խոսելու բնթացքում ստեղծվող դիմային հիմնական հարաբերությունների վրա հենվող ուղղակի-դիմային, նույնպես և խոսքային յուրահատուկ պայմանների հետ կապվող անորոշ-դիմային, ընդհանուր-դիմային և փոխարինական նշանակություններ։ Դիմա-թվային յուրաքանչյուր ձև նշանակությունների այս տարբերություններն արտահայտում է կիրառությունների մեջ։

2. Ուղղակի-դիմային նշանակությունների արտահայտման դեպքում զործող կամ եղող առարկայի և բայ-ստորոգյալի դեմքերը ընդհանրապես համընկնելով՝ միաժամանակ ունենում են և տարբերություններ, որոնք արտահայտվում են հոգնակի թվում։ Այս թվի իմաստային յուրահատկությունը հնարավորություն է տալիս հոգնակի բայ-ստորոգյալների մոտ հաճախ արտահայտել ոչ միայն մեկ դեմքի դրսևորում ունեցող ենթակա, այլև այլադեմ բաղմակի ենթականեր, որոնք առանձին-առանձին միմյանց նկատմամբ դիմային տարբերություն ունենալով իրենց բառական-դերանվանական արտահայտությամբ՝ նույնպիսի տարբերությամբ արտացոլում չեն գտնում բայ-ստորոգյալի դեմքի մեջ. այստեղ նրանց դիմային տարբերությունները համահարթվում են։

3. Այլադեմ բաղմակի ենթակաների արտահայտումը հնարավոր է միայն հոգնակի առաջին և երկրորդ դեմքերի բայ-ստորոգյալների մոտ։ Այս դեպքում բայ-ստորոգյալի դիմային նշանակությունը իր համապատասխան ձևավորումով հենվում է այլադեմ ենթակաների խմբի մեջ մտնող մեկ ենթակայի դիմային հարաբերության վրա, ենթակա, որը արտահայտում է կա՛մ խոսողի (առաջին), կա՛մ խոսակցի (երկրորդ) դեմքը։ Առաջին դեմքի ենթակայի առկայությամբ որոշողը առաջին դեմքն է, իսկ սրա բացակայությամբ և երկրորդի առկայությամբ որոշողը երկրորդ դեմքն է։ Այլադեմ բաղմակի ենթակաների դեպքում բայ-ստորոգյալի դիմային նշանակության արտահայտման համար երրորդ դեմքը դեր չունի, մինչդեռ թվի համար նշանակություն ունի։

4. Բայ-ստորոգյալի մեջ այլադեմ բաղմակի ենթակաների դիմային միասնականացումը հենվում է այլադեմ բաղմակի ենթակաների դեմքերի իմաստային միասնականացման հնարավորության վրա։ Այդ ենթակաները միմյանց նկատմամբ իրենց բառական-դերանվանական արտահայտությամբ ունենալով դիմային տարբերություն՝ միասնական են լինում իրենց զործողությամբ, եղելությամբ կամ դրությամբ։ Գործողության, եղելության կամ դրության հակադրության պայմաններում անհնարին է այլադեմ բաղմակի ենթակաների դիմային իմաստների միավորումը դիմային մեկ կողմում։

5. Բայական դեմքի նշանակությունների մեջ անորոշ-դիմային և ընդհանուր-դիմային նշանակությունների հետ պետք է տարբերել նաև փոխարինական նշանակությունները: Այսպիսի նշանակությունները երբեմն խառնվում են անորոշ-դիմային և ընդհանուր-դիմային նշանակությունների հետ, սակայն այդ պատճառով չի կարելի անտեսել նրանցից տարբերվող փոխարինական բացահայտ նշանակությունները, որոնք հանդես են գալիս մի դեմքի՝ մի այլ դեմքի փոխարինումով, երբ դիմային մի ձևը արտահայտում է մի այլ ձևի նշանակություն: Լինում են նաև թվային փոխարինումներ: Յուրահատուկ պատկեր են ներկայացնում ուրիշի ուղղակի խոսքի անուղղակի վերածվելու դեպքում հանդես եկող դիմային փոխարինումները:

6. Բուն դիմային հարաբերությունների արտահայտման համար առաջին հերթին հանդես են գալիս բայական դեմքի որոշակի-դիմային նշանակությունները: Անորոշ-դիմային, ընդհանուր-դիմային և փոխարինական նշանակությունները կիրառական ածանցյալ նշանակություններ են: Թեև նրանց արժեքը սոսկ ոճական չէ, դրա հետ նրանք ունեն նաև քերականական դեր, այնուամենայնիվ գերակշռող դեր չունեն, արտահայտվող խոսքի մեջ դիմային հարաբերությունների որոշակի ու ճշգրիտ դրսևորման տեսակետից դիտում են որոշակի-դիմային նշանակություններին: Այդ պատճառով էլ դիտվում են իրեն ոչ հիմնական, երկրորդական նշանակություններ՝ որոշակի-դիմային հիմնական նշանակությունների հանդեպ:

7. Անորոշ-դիմային, ընդհանուր-դիմային և փոխարինական նշանակությունների արտահայտման տեսակետից ժամանակակից հայերենի բայի բոլոր դեմքերը համահավասար կիրառություններ չունեն: Այսպիսի նշանակություններով հատկապես աչքի են ընկնում երկրորդ և երրորդ դեմքերը, որոնք ի վիճակի են դրսևորելու թե՛ անորոշ-դիմային, թե՛ ընդհանուր-դիմային և թե՛ փոխարինական նշանակություններ: Նրանց համեմատությամբ խիստ կայուն է առաջին դեմքը, որը թեև արտահայտում է ընդհանուր-դիմային և թվային փոխարինական նշանակություններ, սակայն այդ կիրառություններով շատ հաճախ չի հանդիպում:

ОСОБЕННОСТИ ЗНАЧЕНИИ И УПОТРЕБЛЕНИЯ ГЛАГОЛЬНОГО ЛИЦА В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. А. АБРААМЯН

(Р е з ю м е)

Каждое глагольное лицо в современном армянском языке имеет основные и второстепенные значения. Второстепенным мы считаем не только обобщенное и неопределенное значения, но и переносное или заменяющее употребление.

В современном армянском языке форма одного лица может употребляться в значении другого лица. Так употребляются формы второго и третьего лиц. Глагольные лица заменяются также по форме и значению при превращении прямой речи в косвенную.

В статье затрагиваются некоторые явления, связанные с употреблением различных однородных подлежащих при общем личном глаголе-сказуемом.